NCDC

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՍՆՆԴԱՅԻՆ ԵՎ ՔԻՄԻԱԿԱՆ ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

ՀՈՒՆՎԱՐ 2018 թ.

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՍՆՆԴԱՅԻՆ ԵՎ ՔԻՄԻԱԿԱՆ ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

2018 թվականի հունվար ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում չեն արձանագրվել այնպիսի վարակիչ հիվանդություններ, ինչպիսիք են տիֆեր, պարատիֆեր, սիբիրյան խոց, կատաղություն, խոլերա, ռիկետցիոզներ, փայտացում, դիֆթերիա, սուր պոլիոմիելիտ, կարմրուկ, կարմրախտ:

Իմունականխարգելում

Հայաստանի Հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդությունների առումով իրավիճակը բարենպաստ է: 2018 թվականի հունվար ամսին հանրապետությունում չեն արձանագրվել կառավարելի վարակիչ հիվանդություններ, բացառությամբ չպատվաստած և թերի պատվաստված երեխաների շրջանում արձանագրված կապույտ հազի սպորադիկ դեպքերի:

1 տարեկան երեխաների շրջանում պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության միջին հանրապետական ցուցանիշը դեկտեմբեր ամսին կազմել է 91.6% (նպատակային ցուցանիշը՝ 90%): 2 տարեկան երեխաների շրջանում պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության միջին հանրապետական ցուցանիշը կազմել է 91.3% (նպատակային ցուցանիշը՝ 90%): 7 տարեկան երեխաների շրջանում պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության միջին հանրապետական ցուցանիշը կազմել է 96.7% (նպատակային ցուցանիշը՝ 90%):

Բնակչության շրջանում պատվաստումներում ընդգրկվածության բարձր ցուցանիշների շարունակական ապահովումը կնպաստի հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդությունների առումով բարենպաստ համաճարակային իրավիճակի պահպանմանը:

Հատուկ վտանգավոր վարակներ

Բրուցելոզ

Նշված ժամանակահատվածում հանրապետությունում արձանագրված բրուցելոզ հիվանդության դեպքերը համեմատած նախորդ ամսվա հետ նվազել են 1 անգամ, իսկ 2017 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ դեպքերի թիվն անփոփոխ է:

2018թ. հունվար ամսվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է բրուցելոզի 13 դեպք, որից 5-ը՝ Երևան քաղաքում, 3-ը՝ Արմավիրի, 4-ը՝ Սյունիքի, 1-ը՝ Կոտայքի մարզերում: Յուրաքանչյուր դեպքի մասին տեղեկատվություն է տրամադրվել ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը՝ կենդանիների շրջանում համապատասխան միջոցառումներ կազմակերպելու համար:



Հայաստանի Հանրապետությունում 2017-2018 թթ հունվարի ընթացքում արձանագրված բրուցելոզի դեպքերը

Նշված ժամանակահատվածում արձանագրվել է **տուլարեմիա** հիվանդության 1 դեպք՝ Արագածոտնի մարզում: Անմիջապես ձեռնարկվել են համապատսխան միջոցառումներ, իրականացվել է համաճարակաբանական հետազոտություն, կատարվել նմուշառում, վերջինս ուղարկվել լաբորատոր հետազոտման: Նշանակվել է համապատասխան բուժում, հիվանդի վիճակը գնահատվում է բավարար:

<u>Աղիքային վարակիչ հիվանդություններ</u>

Հայաստանի Հանրապետությունում 2018 թվականի հունվար ամսին արձանագրվել է աղիքային վարակիչ հիվանդությունների 540 դեպք, որից 158-ը՝Երևան քաղաքում, 382-ը՝ մարզերում: 2017 թվականի նույն ժամանակահատվածի համեմատությամբ աղիքային վարակներով հիվանդացությունը աճել է մոտ 1.3 անգամ, իսկ 2017թ դեկտեմբեր ամսվա հետ դեպքերի թիվն անփոփոխ է :



Հայաստանի Հանրապետությունում 2017-2018 թթ հունվարի ընթացքում արձանագրված վարակիչ աղիքային հիվանդությունների դեպքերը

Արձանագրված աղիքային վարակիչ հիվանդությունների օջախներում իրականացվել են համաճարակաբանական հետազոտություններ և հակահամաճարակային միջոցառումներ՝ վարակի հետագա տարածումը և բռնկումների առաջացումը կանխելու նպատակով:

2018 թվականի հունվար ամսին Հայաստանի հանրապետությունում աղիքային վարակիչ հիվանդությունների բռնկումներ չեն արձանագրվել:

<u>Սուր արտաընդերային վիրուսային հեպատիտներ</u>

Հայաստանի Հանրապետությունում արտաընդերային սուր վիրուսային հեպատիտի հիվանդացության ցուցանիշի աճ կամ նվազում հունվար ամսին չի արձանագրվել նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Սույն թվականի հունվար ամսին արձանագրվել է արտաընդերային սուր վիրուսային հեպատիտի 8 դեպք: Վարակման հավանական պատճառները հայտնաբերվել են (ատամնաբուժական և այլ բժշկական միջամտություն ՌԴ-ում և Վրաստանում, սպասարկում գեղեցկության սրահում):

<u>Գրիպ և Սուր շնչառական վարակներ</u>

2018թ հունվար ամսին Հայաստանի մարզերում և Երևան քաղաքում արձանագրվել է ՍՇՎ-ով պայմանավորված հիվանդացության ակտիվություն,

գտնվելով բարձր համաճարակային շեմից: Նշված ժամանակահատվածում համեմատած 2017թ դեկտեմբեր ամսվա հետ արձանագրվել է սուր շնչառական վարակների դեպքերի աճ՝ 1.6 անգամ: 2018 թ հունվարի հիվանդացության ընդհանուր ցուցանիշը համեմատած 2017թ. նույն ժամանակահատվածի հետ աճել է 2.2 անգամ, 2016 թվականի հետ նվազել՝ 2.1 անգամ, պայմանավորված հիվանդության սեզոնայնությամբ, եղանակային փոփոխություններով և հանրապետությունում շրջանառող գրիպի և այլ սուր շնչառական վարակների հարուցիչների բազմազանությամբ: Առավել շատ դեպքեր արձանագրվել են 0-4տ երեխաների շրջանում:



2014-2017 թթ. ընթացքում արձանագրված սուր շնչառական վարակներն՝ ըստ ամիսների, 100 000 բնակչի

Հունվարի ընթացքում գրիպի դետքային համաճարակաբանական հսկողության շրջանակներում, գրիպանման հիվանդությունների և ծանր սուր շնչառական վարակների նկատմամբ հետազոտվել է 337 նմուշ: Լաբորատոր հետազոտության արդյունքում արձանագրվել է գրիպ Բ տեսակի 81 դեպք, գրիպի Ա տեսակի H1N1 ենթատեսակի 16 դեպք: Այլ սուր շնչառական վարակներ չեն արձանագրվել: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել է գրիպ Ա տեսակի H3 ենթատեսակի 8 դեպք, ռեսպիրատոր սինցիցտիալ վիրուսի 13 դեպք, ռինովիրուսի 7 դեպք, պարագրիպի 4 դեպք, մետապնևմովիրուսի 4 դեպք:

<u>Այլ օդակաթիլային այլ վարակներ (ջրծաղիկ, քութեշ, վարակային մոնոնուկլեոզ)</u>

Ջրծաղիկ



Հայաստանի Հանրապետությունում 2016 և 2017 թթ. ջրծաղիկ հիվանդության արձանագրված դեպքերը ըստ ամիսների՝ հունվար -դեկտեմբեր

Համաձայն վերլուծության տվյալների, 2018 թվականի հունվարին արձանագրված ջրծաղկի դեպքերը համեմատած դեկտեմբեր ամսվա հետ նվազել են՝ 1 անգամ, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ ՝ 1.3 անգամ, ինչը պայմանավորված է հիվանդության սեզոնայնությամբ: Առավել շատ դեպքեր արձանագրվել են 0-14տ. երեխաների շրջանում, կազմակերպ հաստատություններում: Կազմակերպ հաստատություններում, հնարավորության սահմաններում, առաջին դեպքերը մեկուսացվում են, հաջորդիվ հսկողությունն սահմանվում է առողջ, սակայն հիվանդի հետ շփված երեխաների նկատմամբ:

Քութեշ



Հայաստանի Հանրապետությունում 2017 և 2018 թթ հունվարի ընթացքում. քութեշ հիվանդության արձանագրված դեպքերը

Գծապատկերի տվյալները վկայում են այն մասին, որ 2018 թվականի հունվարի ընթացքում արձանագրված քութեշի դեպքերը համեմատած նախորդ ամսվա հետ նվազել են՝ 1.4 անգամ, իսկ համեմատած 2017 թվականի միևնույն ժամանակահատվածի հետ աճել՝ 2.2 անգամ: Բոլոր դեպքերն արձանագրվել են 0-18տ. երեխաների շրջանում սակայն առավել շատ 3-6տ. երեխաների շրջանում՝ 36 դեպք, ինչը կազմում է ընդհանուր թվի 65.4%-ը: Բոլոր դեպքերն ենթարկվում են համաճարակաբանական հետազոտության, որի նպատակն է հիմնականում հիվանդության ջնջված ձևերով հիվանդների հայտնաբերումը, որոնք կարող են վարակի աղբյուր հանդիսանալ, կանխելով վարակի հետագա տարածումը:

<u>Վարակային մոնոնուկլեոզ</u>



Հայաստանի Հանրապետությունում 2017 և 2018թթ հունվարի ընթացքում. Վարակային մոնոնուկլեոզ հիվանդության արձանագրված դեպքերը

Ինչպես երևում է գծապատկերից 2017 թվականի դեկտեմբերի ընթացքում արձանագրված վարակային մոնոնուկլեոզի դեպքերը համեմատած նախորդ ամսվա հետ նվազել են՝ 1.3 անգամ, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ՝ 1.4 անգամ: Հունվարի ընթացքում արձանագրվել է մոնոնուկլեոզի 31 դեպք, որից 27-ն՝ արձանագրվել է 0-18տ. երեխաների շրջանում:

<u>Սննդային թունավորումներ</u>

Հանրապետության տարածքում հունվար ամսին արձանագրվել է բոտուլիզմի 2 դեպք՝ 2 տուժածով: 0-14 տարեկան երեխաների շրջանում թունավորման դեպքեր չեն արձանագրվել: Բոտուլիզմի դեպքերը արձանագրվել են Լոռու և Տավուշի մարզերում: Բոտուլիզմի պատճառ է հանդիսացել տնային պայմաններում պահածոյացված լոլիկի մարինադը և կարմիր պղպեղը: Բոտուլիզմի դեպքերի վերջնական ախտորոշումը դրվել է համաճարակաբանական տվյալների և կլինիկական նշանների հիման վրա:

Սննդային թունավորման դեպքերի կանխարգելման նպատակով օջախներում իրականացվել է բժշկահիգիենիկ գիտելիքների տարածում՝ սննդային թունավորումների առաջացման պատճառների, կանխարգելման հիմնական սկզբունքների վերաբերյալ: Սննդային թունավորումների կանխարգելման վերաբերյալ, բնակչության իրազեկվածության բարձրացման նպատակով, տարբեր լրատվամիջոցներով պարբերաբար իրականացվում է քարոզչություն:

Քիմիական թունավորումներ

Հայաստանի Հանրապետությունում հունվար ամսվա ընթացքում արձանագրված քիմիական թունավորումների 47.7%-ը գրանցվել է Երևան քաղաքում, իսկ 52.3%-ը՝ մարզերում: Արձանագրված դեպքերի գերակշիռ մասը (34.9%) առաջացել է օրգանական լուծիչների, մասնավորապես՝ շմոլ գազի և այլ կենցաղային նյութերի թունավոր ազդեցությունից, ինչը պայմանավորված է շմոլ գազով թունավորումների սեզոնային բարձրացումով, 3.4% թունավոր կենդանիների խայթոցի արդյունքում, 23.5%-ը՝ դեղամիջոցներով թունավորումներն են՝ ինքնաբուժման և ծնողի անուշադրության հետևանքով, 33.5%-ն՝ ալկոհոլային թունավորումները՝ ալկոհոլի բարձր չափաբաժինների ընդունումից, 3.4%-ն՝ օճառների և լվացող նյութերի թունավոր ազդեցությունից, 1.3%-ն՝ այլ և չճշտված ծագման թունավոր նյութերի ազդեցությունից: Թունաքիմիկատներով և խոտաբույսերով թունավորման դեպքեր չեն արձանագրվել:

2017 թվականի հունվար ամիսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատելիս, կարելի է դիտարկել, որ քիմիական թունավորումների հիվանդացության ցուցանիշը նվազել է 1.6 անգամ: